ԱՄԵՐԻԿԱՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ

Ք. Ռ. ԱՎԱԳՅԱՆ

Երկրորդ աշխարհամարտի տարիներին պատմական ճակատագրի բերումով աշխարհով մեկ սփռված հայությունը, առաջադեմ մյուս ժողովուրդների հետ կողք կողքի, մարտնչել է ընդդեմ ֆաշիզմի, ընդդեմ բռնության՝ իր ավանդը ներդնելով հաղթանակի նվաճման գործում։ Նրանց շարքում իրենց առանձնահատուկ տեղն ունեն ամերիկահայերը, որոնք պատերազմի ամբողջ ընթացքում և ռազմական բոլոր գործողություններում հավասարապես մարտընչել, զոհվել և հաղթանակել են՝ երկրի պաշտպանության և համայն մարդկության ազատագրման համար։ Ինչպես նշվում է «Մեր տղաները. Երկրորդ համաշխարհային պատերազմի ամերիկահայ վետերաններ» արժեքավոր ժողովածուում, «այնտեղ, որտեղ կռվել են ամերիկացիները, այնտեղ են եղել նաև մեր տղաները»[1]՝ ամերիկահայերը, որոնք անձնուրաց զոհաբերել են իրենց կյանքը հանուն որդեգրած հայրենիքի ազատության ու համընդհանուր հաղթանակի։

Հատկանշական է, որ ամերիկահայ զինվորների հիմնական և զգալի մասը պատմական հանգամանքների բերումով ԱՄՆ գաղթածներն էին, թեև քիչ չեն եղել նաև ծագումով հայ ամերիկացիներ։ Ամերիկյան բանակ զորակոչված հայ երիտասարդների հայրենասիրական զգացմունքներն արտահայտող հետևյալ խոսքերը բնութագրական են ամերիկահայ յուրաքանչյուր զինվորի համար. «Ես երջանիկ կլինեմ իմ կյանքը զոհել այս երկրի համար, քանի որ Միացյալ Նահանգներն այնքան լավ են վերաբերվել իմ ընտանիքի և իմ հանդեպ»[2]։ Եվ կամ՝ «Մենք պարտական ենք Ամերիկային ավելի, քան Ամերիկան է պարտական մեզ։ Մենք ինչպե՞ս կարող ենք մոռանալ Մերձավոր արևելքի նպաստամատույցի և Կարմիր խաչի մարդասիրությունը պատերազմի տարիներին (Առաջին համաշխարհային—Ք. Ա.) և հետագայում։ ...Այժմ մենք փորձում ենք փոխհատուցել մեր բարոյական մեծ պարտքը»[3]։

ԱՄՆ-ում քաղաքական ու տնտեսական ապահովություն գտած երախտագետ հայերի անսահման նվիրվածության և Երկրորդ աշխարհամարտի տարիներին նրանց ցուցաբերած անօրինակ անձնազոհության մասին են վկայում նաև Նյու Յորքի Հայ Ավետարանական եկեղեցու առաջնորդ Ա. Բեդիկյանի այս տողերը. «...Մեր սեր, այս երկրի նկատմամբ եղել է այնքան իրական, որքան մեր սերը մեր մայրենի նկատմամբ։ Ուստի մենք պատրաստ էինք մեր երկրի համար անել այն, ինչ կարող էինք և տալ՝ ինչ ունեինք, ինչպես կանեինք մեր իսկ մայրերի համար...»[4]։

Երկրորդ աշխարհամարտի ամենածանր տարիներին ԱՄՆ-ի 10 միլիոնանոց բանակի կազմում, ամերիկյան զինվորի հետ կողք կողքի, բոլոր զորատեսակներում (հետևակ, ռազմաօդային և ռազմածովային ուժեր) ծառայել են 18.500—20.000 ամերիկահայեր (1940 թ. ԱՄՆ-ում կար շուրջ 200.000

---

[1] Our Boys. Armenian—American Veterans of World War II, (այսուհետև՝ Our Boys.). New York, 1951, p 1.

[2] J. H. Tashjian. The Armenian American in World War II. Boston, 1952, pp. VII, VIII.

[3] Հայաստանի Հանրապետության Պետական պատմական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊՊԿԱ), ֆ. 426, ց. 1, գ. 3169, թ. 40—41։

[4] Our Boys, էջ 8:

հայ)[5]։ Նրանք արիաբար կռվել են Փիրլ-Հարբորի, Կորալյան ծովի, Միդուեյի, Հյուսիսային Աֆրիկայի, Սիցիլիայի, Իտալիայի, Բիրմայի, Հնդկաստանի, Չինաստանի, Իրանի, Անգլիայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Գերմանիայի և այլ ռազմահակատներում։

Ամերիկահայ զինվորների մեծ մասը վերադարձել է հաղթանակով, սակայն քիչ չեն եղել նաև հերոսաբար զոհվածները (շուրջ 500 հոգի), վիրավորվածները (500-ից ավելի) և անհայտ կորածները (մոտավորապես 50 հոգի)[6]։

ԱՄՆ-ի կառավարությունը բարձր գնահատելով ամերիկահայերի խիզախությունը, նվիրվածությունն ու ռազմական ունակությունները, բազմաթիվ հայորդիների շնորհել է ամերիկյան բանակի ամենաբարձր աստիճաններ, պարգևատրել բարձրադույն կարգի շքանշաններով և հերոսի կոչումներով։ Այսպես՝ Երկրորդ աշխարհամարտի տարիներին Միացյալ Նահանգների բանակի ամենաբարձր կոչում ունեցող հայազգի զինվորականը գեներալ Հայկ Շեքերջյանն էր, որը 1942 թ. այդ կոչմանն էր արժանացել պրեզիդենտ Ֆ. Ռուզվելտի կողմից։ Դեռևս երիտասարդ հասակում դրսևորած քաղաքացիական բացառիկ խիզախության համար (նա տասնվեց տարեկան էր, երբ քաջաբար իրեն նետել էր սաստիկ հրդեհվող տան մեջ՝ փրկելով մի կնոջ ու նրա երեխային) ԱՄՆ-ի Ուեսթ-Փոյնթի ռազմական ակադեմիա ընդունված և ուսանած առաջին հայազգի զինվորականը, հաջողությունների հասնելով, Առաջին աշխարհամարտից հետո ծառայել է Անտանտի զորքերի կազմում։ Զբաղեցրել է պատասխանատու պաշտոն պաշտպանության նախարարության գլխավոր շտաբում, իսկ 1943 թ. նշանակվել Ալաբամայի նահանգի Սիբոնիի ճամբարի ուսումնական կենտրոնի հրամանատար։ Իր մատուցած բարձր ծառայությունների համար նա պարգևատրվել է «Երախտիքի լեգեոն» շքանշանով։ Հ. Շեքերջյանը հպարտ էր իր հայկական ծագմամբ։ Այդ են վկայում ամերիկահայերին ուղղված նրա խոսքերը. «...Հայերին բնորոշ է սերնդեսերունդ փոխանցվող քաջությունն ու հավատարմությունը։ Հաջողակ լինելու ցանկության հետ միասին այս գործոններն օգնում են նրանց... լինել արժանի ամերիկացի քաղաքացիներ՝ ի նպաստ երկրի ծաղկմանն ու բարգավաճմանը»[8]։

Ամերիկահայ բարձրաստիճան զինվորականների շարքում իրենց խիզախությամբ փայլել են նաև ամերիկյան բանակի հրամանատար Ջեք (Սիրակ) Հանիկյանը, գնդապետներ Քըրք Բուչախը և Սարգիս Զարդարյանը։ Վերջինիս, նախքան Աֆրիկայում ծառայության անցնելը, վստահված է եղել ղեկավարել ԱՄՆ-ի ափամերձ մի շարք տարածքների (Մեյնի, Մասսաչուսեթսի նահանգներ) պաշտպանությունը[9]։ Ամերիկյան բանակի գլխավոր շտաբի սպայակազմում էին Հակոբյանը, Կարապետյանը, Սարգսյանը[10]։ Գնդապետի տեղակալ Հարրի Սաչակյանն առաջիններից էր, որ ամերիկյան բանակի լեռնային ջոկատներին ուսուցանել էր օդագնացության մարտավարություն, իսկ ավելի ուշ՝ առաջադրվել ամերիկյան ռազմաօդային ուժերի վարչության կազմում[11]։

---

[5] J. H. Tashjian, նշվ. աշխ., էջ VIII: D. M. Lang, The Armenians. A People in Exile, London, 1981, p. 159: V. Wertsman, The Armenians in America. 1618 –1976. New York, 1978, p. 13.

[6] J. H. Tashjian, նշվ. աշխ., էջ 252—362, 363—397, 433—454։

[7] N. Barsumian, Stowaway to Heaven. Ohio, 1961, էջ 250: J. H. Tashjian, նշվ. աշխ., էջ 155։

[8] J. H. Tashjian, նշվ. աշխ., էջ VIII։

[9] J. H. Tashjian. The Armenians of the United States and Canada. Boston, 1947, էջ 58.

[10] Our Boys, էջ 94.

[11] J. H. Tashjian, նշվ. աշխ., 1947, էջ 57, 58։

Միացյալ Նահանգների բացառիկ և ամենաբարձր պարգևին՝ Կոնգրեսի Պատվո շքանշանին (որով ամերիկյան բանակից պարգևատրվել էր ընդամենը 87 մարդ) արժանացել էր ամերիկյան հերոս, ավագ լեյտենանտ էռնեստ Դերվիշյանն իր անօրինակ և գրեթե առասպելական խիզախության համար, որ ցուցաբերել էր 1944 թ. մայիսին՝ իտալական Սիստեռնա վայրում։ Կատաղի ընդհարման ժամանակ կորցնելով իր մարտական ընկերներին և մենամենակ հայտնվելով թշնամական շրջափակման մեջ, նա կարողացել էր ռազմական արվեստի իր աներևակայելի հնարքներով դերել հակառակորդի՝ միանդամից քառասունհինգ զինվոր, խլել նրեք զնդացիր և տաս ատրճանակ։ Է. Դերվիշյանի հարազատ Ռիչմոնդ քաղաքը համընդհանուր տոն էր հայտարարել իր հերոսի վերադարձի օրը՝ այն հռչակելով որպես «Դերվիշյանի օր»։ Քաղաքապետի և բարձրաստիճան այլ պաշտոնյաների մասնակցությամբ տեղի են ունեցել հանդիսություններ, որտեղ նրան շնորհվել են թանկարժեք նվերներ, իսկ դրամական պարգևները նա հանձնել է հաշմանդամ զինվորների օգնության հիմնադրամին[12]։ Եվրոպական և խաղաղօվկիանոսյան տարբեր շրջաններում իր փայլուն ծառայության համար է. Դերվիշյանը պարգևատրվել է նաև արտասահմանյան մի շարք երկրների շքանշաններով. լեհական վտարանդի կառավարության կողմից՝ Պատվո մեդալը, Բրոնզե աստղով, Արծաթե խաչով, իտալական զինվորական հրամանատարության կողմից՝ Ռազմական արիության խաչով, ինչպես նաև՝ Լավ վարքի շքանշանով, Եվրոպական-Աֆրիկյան-Միջինարևելյան ճակատամարտերի շքանշանով ու Արծաթե աստղով, Ամերիկյան ճակատամարտերի շքանշանով, Հաղթանակի շքանշանով, Մարտական հետևակազորայինի կրծքանշանով[13]։

Պատերազմի ավարտից հետո գնդապետի աստիճանով զորացրված է. Դերվիշյանը զբաղեցրել է ռազմական բարձր պաշտոններ. եղել է Ամերիկյան ազգային լեգեոնի փոխհրամանատար, ռազմական ու պետական տարբեր հարցերով խորհրդական[14]։

Հետևակային ծառայության մեջ գրսևորած անհատական հերոսության համար երկրի երկրորդ բարձրագույն պարգևին՝ «Առանձնահատուկ ծառայության խաչ» շքանշանին, արժանացել է շտաբի սերժանտ Հենրի Կալփակչյանը (հետմահու), ծովային ծառայության մեջ՝ փոխհրամանատար Կեդրիկ Ջանյանը, գնդապետ Հարրի Կիղիրյանը և առաջին կարգի լեյտենանտ Վիկտոր Մաղաքյանը։ Խիզախության համար «Արծաթե աստղ» բարձր շքանշանով պարգևատրվել են 52 ամերիկահայեր, որոնցից հինգը՝ հետմահու։ Անգնահատելի նվիրվածության և օրինակելի ծառայության համար «Ծրախտիքի լեգեոն» շքանշանին են արժանացել գնդապետ Քրրք Բուչախը, փոխգնդապետ Արամ Թութեյլյանը։ Օդաչուի սխրանքի համար բարձր պարգևի՝ «Օդանավորդության խաչ» շքանշանի արժանացել են 44 ամերիկահայեր, որոնցից երկուսը՝ հետմահու։ Անձնական խիզախության և պատերազմական դժվարին հանգամանքներում օգնության հասնելու համար սահմանված Զինվորական շքանշանով պարգևատրվել են 11 ամերիկահայեր, որոնցից մեկը՝ հետմահու[15]։

Ամերիկահայ հերոսների նախակարապետը, ծնունդով վանեցի, առաջին կարգի շարքային Վարդան Աղաբաբյանն էր՝ Սփրինգֆիլդից։ Նա մասնակցել էր Առաջին և Երկրորդ աշխարհամարտերին, վիրավորվել տասնչորս անգամ և պարգևատրվել ամերիկյան ռազմական երկու բարձրագույն շքանշաններով[16]։

---

12 Our Boys, էջ 111—112:

13 N. Barsumian, նշվ. աշխ., էջ 135։

14 V. Wertsman, նշվ. աշխ., էջ 119։ Our Boys, էջ 111—112:

15 J. H. Tashjian, նշվ. աշխ., 1952, էջ 155—166։

16 Նույն տեղում, էջ X, 498—501։

Ամերիկահայ հերոս զինվորների թիվը չափազանց մեծ է։ Ուստի հիշատակում ենք միայն խոշոր ճակատամարտերում առավել աչքի ընկած, առաջամարտիկ մի շարք հայորդիների, որոնցից յուրաքանչյուրն ուրույն կերպով է նպաստել հաղթանակի նվաճմանը։

1941 թ. դեկտեմբերի 7-ին Խաղաղ օվկիանոսում ամերիկյան 86 ռազմանավերի նկատմամբ Ճապոնիայի իրականացրած հարյուրից ավելի ռմբահարումների ժամանակ, որոնք և պայմանավորեցին ԱՄՆ-ի ներգրավումը Երկրորդ աշխարհամարտում, ամերիկյան բանակի կազմում էին նաև բազմաթիվ ամերիկահայեր։ Հարրի Փիլաֆյանը ծովի վրա առաջիններից է ընդունել Փիրլ-Հարբորից ստացված SOS աղետի ազդանշանը, իսկ ռմբակոծության ժամանակ Փիրլ-Հարբորի ռազմաօդային կայանում ծառայող կրտսեր ենթասպա Ջորջ Վարդապետյանը, այդտեղ և հետագայում ցուցաբերած սխրանքների համար, չորս անգամ արժանացել է Մարտական աստղի և մտել առավել աչքի ընկածների պրեզիդենտական ցուցակի մեջ[17]։ Այդ դժվարին օրերին Փիրլ-Հարբորում իր զինվորական պարտքը կատարելիս զոհվել է առաջին ամերիկահայ զինծառայողը՝ կրտսեր ենթասպա Ջեյմս Թոփալյանը (պատերազմի ավարտից հետո Բոստոնի փողոցներից մեկը կոչվել է նրա անունով)[18], արյունալի ընդհարման ժամանակ վիրավորվել են Ագնունի Բալիգյանն ու Միսաք Մանուկյանը, հրաշքով փրկվել՝ Վարանդ Մանուկյանը, Վարդգես Կիբակոսյանը, Ջորջ Գյոնջյանը, ծովային հրետանու զինվոր Չարլզ Ասլանյանը, հրամանատար Ջեք Նահիկյանը և այլք։ Ամերիկահայերի շրջանում առաջին մարտական թռիչքը կատարել է կրտսեր ենթասպա Ջոն Ֆրունջյանը[19]։ Փիրլ-Հարբորի ռմբահարման ժամանակ ինքնաթիռային կայանում իր ծառայությունն է իրականացրել կրտսեր ենթասպա Ջորջ Վարդապետյանը, որն այդտեղ և հետագայում դրսևորած բացառիկ խիզախության համար չորս անգամ արժանացել է «Մարտական աստղի» և մտել առավել աչքի ընկածների պրեզիդենտական ցուցակի մեջ։

Հայերը հերոսաբար մասնակցել են Ճապոնիայի դեմ ամերիկյան բանակի մղած խաղաղօվկիանոսյան գրեթե բոլոր մարտերին։ Այսպես՝ 1942 թ. ամռանը Միդուեյի կղզիներում նրանք հաջողությամբ դիմակայել են թշնամական 88 ռազմանավերի հարձակումներին (Լևոն-Չարլզ Ղասաբյանը՝ Քեմբրիջից, ծովային Հարրի Հովնանյանը՝ Բրոնքսից, ռադիոկապավոր Ռիչարդ Միքայելյանը՝ Ռոդ Այլենդից և ուրիշներ), իսկ մեկ տարի անց Մունդա կղզում առավել խիզախությամբ աչքի են ընկել հակաօդային ուժերի լեյտենանտ, հրաձիգ Չարլզ Ալիանաքյանը՝ Մեդիայից և առաջին կարգի շարքային, դիպուկահար Չարլզ Մարտիրոսյանը՝ Սթենֆորդից։ Վերջինս, մարտերից մեկում կորցնելով իր բազմաթիվ զինակիցներին, վրեժով լցված, միայնակ ոչնչացրել էր 50 ճապոնացիների[20]։

1942—1943 թթ. Գուադալքանալի համար մղվող մարտերում հերոսացան շարքային Ջոզեֆ Փոլոջյանը (Հարթֆորդից) և հայազգի այլ զինվորներ, ընդ որում 10 ծովայինների անունները հավերժ հիշատակված են կղզու պաշտպանության Պատվո արձանագրության մեջ[21]։ Վիկտոր Մաղաքյանը (Ֆրեզնոյից) պարգևատրվել է Ծովային խաչ, Ծիրանագույն սիրտ և Արծաթե աստղ շքանշաններով։ Հետագայում նա առաջադրվել է ամերիկյան գնդապետի ավագ օգնական[22]։ Ճապոնացիների դեմ ծովային ուժերի հերոս Վ. Մաղաքյանի սխրանքներով առլեցուն մարտերը պատերազմի ավարտից հետո իրենց գե-

---

[17] Our Boys, էջ 94—95.

[18] V. Wertsman, նշվ. աշխ., էջ 14։

[19] J. H. Tashjian, նշվ. աշխ., 1952, էջ 1—9։

[20] Our Boys, էջ 96—97.

[21] Նույն տեղում, էջ 97, 99։

[22] J. H. Tashjian, նշվ. աշխ., 1947, էջ 57։

զարվեստական արտացոլումն են գտել ամերիկյան շարժանկարներում[23]։ Գուադալքանալի մարտերում «ծովային մեղուների» համբավ էին ձեռք բերել փոխգնդապետ Ս. Փիլիգյանը (Խաչ Լոնգմիդոուից) և Չարլզ Վանեսյանը (Չելսիից)[24]։

Ֆիլիպիններում իրենց արիությամբ աչքի են ընկել սերժանտ Արմեն Փանոսյանը, գլխավոր հրամանատար Ջեքբ Հակոբյանը և այլք[25]։ Վերջինիս սուզանավը ճապոնական շրջափակման միջով դուրս էր բերել ու փրկել ֆիլիպինյան պետական ոսկին, որի համար Ջ. Հակոբյանը պարգևատրվել էր Արծաթե աստղ շքանշանով[26]։

Ամերիկահայերը քաջաբար մասնակցել են նաև Հյուսիսային Աֆրիկայում՝ Ալժիրում, Օրանում, Կասաբլանկայում, Բիզերթում, Թունիսում և այլուր 1942—1943 թթ. մղված ճակատամարտերին։ Հյուսիսային Աֆրիկայի նվաճման ժամանակ զոհված առաջին ամերիկացի զինվորը հայազգի կրասեր լեյտենանտ Ջորջ Քուշնարյանն էր։ Հիսուն ճակատամարտերում իրենց խիզախություններով հայտնի էին Առանձնահատուկ օդանավորդության խաչով, Օդային շքանշանով ու Պրեզիդենտական բացառիկ կոչումնագրով պարգևատրված օդաչու, առաջին կարգի լեյտենանտ Ալ[illegible]ոտ Թեգնազյանը (Բրոնքսից), Առանձնահատուկ օդանավորդության խաչով պարգևատրված սերժանտ Միհրան Գիքսոսյանը (Լինբրուքից), Թշնամու [illegible]թ ինքնաթիռ կործանելու համար նույն պարգևին, ինչպես նաև Զինվորն[illegible] շքանշանին արժանացած առաջին կարգի սերժանտ Հրանտ Ջերեզյանը (Ն[illegible]ն Ֆրանցիսկոյից), Աֆրիկայում և Գրենլանդիայում ցուցաբերած խիզախության համար երկու անգամ Առանձնահատուկ օդանավորդության խաչի արժանացած հրամանատար Արամ Փարունակը (Փիթմենից) և շատ ուրիշներ[27]։

1943 թ. հուլիսին Սիցիլիայի նվաճման ժամանակ իր քաջությամբ աչքի է ընկել սերժանտ Հայկ Տեր-Օհաննեսյանը, որին հաջողվել էր գերեվարել իտալացի ինը զինվորների, իսկ հետևակազորի շարքային Ջեյմս Մոմջյանը (Ատլանտիկ Սիթիից) կդդու համար վճռական ճակատամարտում զգուշորեն սողոսկել էր թշնամու 300 մ տարածք ընդգրկող կրակահերթի միջով և վերականգնել ամերիկյան զորամիավորումների միջև ընդհատված կապը։ Թշնամու թիկունքում ահուսարսափ տարածող գաղտնի ջոկատների կազմում էին շտաբի սերժանտ Պերճ Ավագանյանը, Ռոշեմբաու Հերոսյանը և առաջին կարգի սերժանտ Ջորջ Օուրգանյանը[28]։ Ամերիկահայերը մասնակցել են նաև 1944 թ. գարնանը ԱՄՆ-ի բանակի՝ դեպի Հռոմ կատարած դժվարին անցմանը։ Առավել աչքի ընկած օդաչուներից էին՝ Առանձնահատուկ օդանավորդության խաչի արժանացած Կարլ Ջենյանը՝ Դրնուբայից, նույն պարգևով, ինչպես նաև Արծաթե աստղի ու Օդային շքանշանների արժանացած լեյտենանտ Չարլզ Մուրադյանը՝ Ուորքեսթերից և հուրիշներ։ Ֆիլադելֆիայից շտաբի սերժանտ Ջեյմ Քելեշյանը մասնակցել էր հրաձգային հիսուն գործողություններին[29]։ Հայերն իրենց քաջաբար են դրսևորել նաև 1944—1945 թթ. Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Գերմանիայի և եվրոպական այլ երկրների համար մղված մարտերում՝ արժանանալով ինչպես ամերիկյան, այնպես էլ եվրոպական երկրների ամենաբարձր պարգևներին։

---

23 Գ. Ս. Երևանյան, Պատմություն Զարսանճագի հայոց, Բեյրութ, 1956, էջ 652—653։

24 Our Boys, էջ 97, 99.

25 J. H. Tashjian, նշվ. աշխ., 1952, էջ 9—25։

26 Hairenik Weekly, 12. III. 1953:

27 Our Boys, էջ 99: J. H. Tashjian, նշվ. աշխ., 1947, էջ 57։ J. H. Tashjian, նշվ. աշխ., 1952, էջ 52—56։

28 Our Boys, էջ 102.

29 Նույն տեղում, էջ 103, 128։

«Թռչող բերդ» ռմբակոծիչի հրամանատար Ժիրայր Գևորգյանը մասնակցել է Բեռլինի, Մյունխենի, Համբուրգի, Շտուտգարդի ռմբահարումներին։ Ֆաշիստական Գերմանիայի վրա շուրջ երեսուներեք ռմբահարում են իրականացրել լեյտենանտ Սեն Պարսամյանը, Ժիրայր Զաբղավաթյանը, սերժանտ Զարյուղ Տերտերյանը։ Վերջինս երեք անգամ պարգևատրվել էր Կաղնու տերևների փունջ շքանշանով և Օդաչուական աչքի ընկած ծառայությունների համար՝ ԱՄՆ-ի օդուժի ամենաբարձր շքանշանով[30]։

Ամերիկացիները կարգուկանոն ապահովելու նպատակով իրենց նվաճած գերմանական քաղաքներում հաստատել էին ռազմական հսկողություն, որին մասնակցել են նաև բազմաթիվ ամերիկահայեր։ Այսպես՝ հինգ խոշոր ճակատամարտերի մասնակից, առաջին կարգի լեյտենանտ Ռոբերտ Թելֆեյանին վստահված էր գերմանական քաղաքներից մեկում իրականացնել քաղաքապետի և դատավորի պաշտոնները։ Իր արդարամիտ գործողությունների համար նա ստացել էր «հաշտարար» մականունը[31]։

1945 թ. ապրիլի 27-ին Էլբա գետի վրա դաշնակից երկրների և ռուսական զինվորների հիշարժան հանդիպմանը ներկա էր նաև շտաբի սերժանտ Վահան Աղնավուրյանը՝ Ուորքեսթերից[32]։

Բազմաթիվ ամերիկահայեր իրենց բնորոշ ազնվության, կարգապահության ու նվիրվածության համար ընդգրկվել են ամերիկյան բարձրաստիճան հրամանատարությանը սպասարկող անձնակազմում։ Ծառայության բերումով նրանք դարձել են պատմական տարբեր կարևոր իրադարձությունների ականատեսներ։ Օրինակ՝ առաջին կարգի շարքային Էդմունդ Օրգանյանը (Բրոնքսից), որպես ամերիկյան դիվիզիայի հրամանատարի անձնական թիկնապահ, մասնակցել է Ավստրիայում գերմանական բանակի շրջափակմանը։ Իսկ Աֆրիկայում իր դրսևորած գերազանց ծառայության համար դետրոյտաբնակ օրիորդ Սյու Սարաֆյանը դարձել է Եվրոպայում անգլոամերիկյան դաշնակցային զինված ուժերի հրամանատար, գեներալ Դ. Էյզենհաուերի շտաբի անդամ՝ գործնականում հանդիսանալով նրա անձնական քարտուղարը։ Գեներալի անձնական թիկնապահներից էր մոտ երեք տարի ծովային ծառայություն իրականացրած սերժանտ Սամվել Գարբեդյանը՝ Ռեյսինից։ Իսկ ծովային Հարրի Հակոբյանը (Էվերեթից), եղել է եռյակ տերությունների Յալթայի համաժողովում (1945 թ. փետրվարի 4—11) ԱՄՆ-ի պրեզիդենտի անձնական թիկնապահների ղեկավարության կազմում[33]։

Ամերիկահայերն անմիջականորեն մասնակցել են նաև խաղաղության տարբեր ռանակցությունների նախապատրաստական և ընթացիկ աշխատանքներին։ Այսպես՝ ֆրանսիական Ռեյմս քաղաքում անցկացված բանակցություններն իրականացվել են առաջնակարգ գծագրող, շտաբի սերժանտ Նյույորքաբնակ Պարգև Սաղաթելյանի պատրաստած քարտեզներով և ռազմական գործողությունները ներկայացնող գծագրերով։ Նա ներկա է եղել նաև Պոտսդամի բանակցություններին (1945 թ. հուլիսի 17—օգոստոսի 2), գեներալ Դ. Էյզենհաուերի շտաբ այցելած Մեծ Բրիտանիայի Ջորջ թագավորի և ֆրանսիական գեներալ դը Գոլի հանդիպումներին[34]։

Երկրորդ աշխարհամարտի տարիներին ամերիկահայերը տվել են նաև բազմաթիվ հետախույզներ։ Եվրոպայի Դաշնակցային գերագույն կենտրոնում գործել է ավագ մայոր Ռոբերտ Ջանթիանը, Եվրոպայում և Հյուսիսային Աֆրիկայում՝ Երախտիքի լեգեոն և Բրոնզե աստղ շքանշաններով, Մարտական խաչով և Ոսկեզօծ աստղով պարգևատրված Արամ Թութլյանը, Միջին արևելքում և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում՝ Ավստրալիայում, Նյու

---

30 Հայ ժողովրդի պատմություն, հ. VIII, Երևան, 1970, էջ 160։

31 Our Boys, էջ 126:

32 Նույն տեղում, էջ 126։

33 Նույն տեղում, էջ 126, 127, 128։

34 Նույն տեղում, էջ 127։

Ջորջիայում, հոլանդական Արևելյան Հնդկաստանում, Ֆիլիպիններում, Ճապոնիայում և այլուր առավել աչքի են ընկել սերժանտ Սեմյուել Թումայանը (Մեդֆորդից), հրամանատար Ջարլզ Կարագյոզյանը՝ (Նյու Յորքից), Ջերրի Ալաջաջյանը (Ուոթերթաունից) և այլք, իսկ սերժանտ Վահան Նորօրևյանը (Բրոնքսից), Թեհրանում փայլուն իրականացրած մի հանձնարարության համար պարգևատրվել է Արծաթե շքանշանով[35]։

Ամերիկահայ զինվորները, մասնակցելով ամերիկյան բանակի գրեթե բոլոր ռազմական գործողություններին, ծառայության բերումով ականատես են եղել նաև 1945 թ. օգոստոսի 6-ին և 9-ին ճապոնական Հիրոսիմա և Նագասակի քաղաքների ռմբահարմանը։ Այսպես՝ կրտսեր ենթասպա Ալբերտ Բարսումյանը (Էվանսթոնից) առաջնորդել է առաջին ատոմային ռումբը կրող ամերիկյան B-29 ռմբակոծիչին։ Տոկիոյի ռմբահարումն առաջինն իրականացրել են Օդագնացության գլխավոր հրետանի շքանշանին արժանացած Մելիք-Փափազյանը և շտաբի սերժանտ Էդդի Մուրադյանը[36]։

Էդվարդ Մարտիրոսյանը՝ Բինգհեմփթնից ներկա է եղել 1945 թ. օգոստոսի 15-ին Ճապոնիայի կապիտուլյացիայի ստորագրմանը, իսկ ոմանք էլ, ծառայելով Ճապոնիայի հետ զինադադարի կնքմանը մասնակցող ամերիկյան ռազմանավերի վրա (մելգնաբնակ Ռոբերտ Մանուկյանը՝ «Թիքոնդերոգա», փրովիդենսաբնակ Ջարլզ Ահարոնյանը՝ «Փիեմոնթ», իսկ դրոշակակիր նյույորքաբնակ Ջորջ Վահան Բաբաքյանը՝ «Միսսուրի» ռազմանավերի վրա), դարձել են երկրորդ աշխարհամարտի ավարտն ազդարարող պատմական իրադարձության անմիջական ականատեսներ[37]։

Անչափ մեծ էր ամերիկահայերի նվիրվածությունն իրենց ասպնջական երկրին, որ բազմաթիվ ընտանիքներ ռազմաճակատ են ուղարկել միանգամից մի քանի հարազատների (եղբայրներ և քույրեր, երկվորյակներ, եղբայակներ, ամուսիններ, հայրեր և որդիներ, ազգականներ)։ Հավերժ անմահ է զոհված եղբայրներ Արա և Վահե Ադամյանների, Հրայր և Սուրեն Մելքոնյանների, Սարգիս և Տիգրան Թաշչյանների, Կարո և Ջոն Յազուջյանների հիշատակը[38]։

Ամերիկյան մամուլն առանձնակի գովեստով է անդրադարձել Քաթարյան բազմազավակ ընտանիքին, որի ութ քաջարի որդիները հերոսաբար մարտընչել են ԱՄՆ-ի տարբեր զորաջոկատներում. Արսենը ծովային ինժեներ էր, Վահագնը՝ կուրսանտ, Կարոն՝ հետևակային, Ժիրայրը, Արծվիկը, Հայկը՝ ռազմական օդաչուներ էին արևմտյան ռազմաճակատում, Ալբերտը կռվել է Ֆրանսիայում, իսկ Հրայրը՝ ծառայել Կարմիր խաչի ջոկատում[39]։

Հարությունյան ընտանիքը ռազմաճակատ է ճանապարհել իր վեց որդիներին՝ Հաորիին, Արսենին, Արամին, Հայկին, Վահանին, Վարգունին և դստերը՝ Վահունուն։

Ռազմական տարբեր գործողություններում անձնվիրաբար մարտնչել են Տեր-Ղաղարյան և Նաջարյան հինգ եղբայրները, չորսով պատերազմի դաշտ մեկնել Ահմաջյան, Գաղարյան, Մկրտչյան, Փաթինյան, Մակարյան եղբայրները և այլք[40]։

ԱՄՆ-ը թշնամու ներխուժումից զերծ պահելու նպատակով երկրի զինված ուժերում ծառայել են քույրեր և եղբայրներ՝ Քաթարին և Առաքել Առա-

---

[35] J. H. Tashjian, նշվ. աշխ., 1947, էջ 58։ Ա. Անդրեասյան, Պատմություն Ռամկավար Ազատական Կուսակցության Ամերիկայի Արևմտյան շրջանակի, Լոս Անջելես, 1981, էջ 61։ Our Boys, էջ 116, 127—128։

[36] Our Boys, էջ 135։ ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 426, ց. 1, գ. 4027, թ. 2։

[37] Our Boys, էջ 137։

[38] J. H. Tashjian, նշվ. աշխ., 1952, էջ 204—214։

[39] Голос Армении, 22. VI. 1991.

[40] J. H. Tashjian, նշվ. աշխ., էջ 215—217, 218—219, 220—227։ Our Boys, էջ 101, 113։

քելյանները, Սյուզան և Սիմոն Թորոսյանները, Լիլիան և Մարտին Արսլանյանները, Սյու, Թիլո, Ռիչ Տարոնացիները, Էլիզաբեթ և Սուրեն Սաջյանները, հայր և դուստր Մանվել և Գլորիա Դարբինյանները, ամուսիններ՝ Լևոն և Մարի Աթթարյանները, Դանիելյանները և շատ ուրիշներ[41]։

Համաշխարհային պատերազմի տարիներին ամերիկյան բանակի բոլոր զորատեսակներում ծառայել են հարյուրավոր հայուհիներ, ընդ որում ավելի քան քառասունը՝ ռազմածովային ուժերում, մյուսները՝ հետևակում և ռազմաօդային ուժերում[42]։

Ամերիկահայերն իրենց ուժերն ու մտավոր կարողությունները ներդրել են նաև «ներքին ճակատում»՝ ներգրավվելով ռազմամթերային, նավաշինական և ռազմական այլ արտադրություններում, ընդհուպ մինչև՝ ատոմային ռումբի ստեղծման ասպարեզը։ Երեսուներկուամյա ատոմագետ դոկտոր Հարբի Դաղլյանն իր տաղանդի ծաղկման շրջանում, ատոմային ռումբի ստեղծմանը նախորդած փորձարկումների ժամանակ պայթյունի զոհ է գնացել։ Այս բնագավառում իրենց դրսևորել են նաև Ջոն Օհաննեսյանը, Սիմոն Էքիզյանը, փոխհրամանատար Արամ Փարունակը։ Ռազմական արվեստի ասպարեզում իրենց գիտելիքներով աչքի են ընկել Ռազմական դեպարտամենտի հատուկ վկայագրով պարգևատրված ավագ սերժանտ Հերոլդ Շահնազարյանը, քիմիկոսներ՝ մայոր Զավեն Նալբանդյանը, փոխգնդապետ Կարլ Դոքմեջյանը։ Վերջինիս ստեղծած հզոր կործանիչ տանկը գործադրվել է Իտալիայի գրավման ժամանակ[43]։

Երկրորդ աշխարհամարտի տարիներին ամերիկահայերն իրենց ավանդն են ներդրել նաև ռազմական բժշկության ասպարեզում։ Ռազմածովային ուժերում անձնուրաց ծառայել են Մարի Հակոբյանը՝ Մեդֆորդից և Ագսեն Միլտոնյանը՝ Ֆիշբուրգից։ Իսկ Նյույորքաբնակ Ռութ Փաբուչյանը, ծառայելով Եվրոպայի ծովային տարբեր բուժքույրական ջոկատներում, իր գործընկերների շրջանում առաջիններից է մուտք գործել Գերմանիա[44]։

Ամերիկահայերը նվիրվածությամբ մասնակցել են նաև տարբեր մայրցամաքներում ամերիկյան Կարմիր խաչի փրկարար աշխատանքներին։ Ֆրեզնոյից ուսուցիչ Հարրի Մանիգյանը ղեկավարել է Ֆիլիպինների Լեյթեյ կղզում, իսկ Նյույորքաբնակ Պաուլին Ռոզ Ջաբուչյանը՝ Նոր Գվինեայում իրականացված ԱՄՆ-ի Կարմիր խաչի աշխատանքները։ Վերջինս Կիրիլ Խանջյանի հետ գործել է նաև Հնդկաստանում ու Բիրմայում։ Հիշարժան է Մայք Գուլյանի՝ Չինաստանում, Բիրմայում և Հնդկաստանում ծավալած մարդասիրական գործունեությունը։ Սոֆյա Հակոբյանի ղեկավարությամբ գործել է նաև Հայ Կարմիր խաչ կազմակերպությունը[45]։

Ամերիկահայերն անձնուրաց մասնակցել են բազմաթիվ փրկարարական աշխատանքների, նպաստել ռազմական տարբեր գոտիներում խաղաղ բնակչության տեղափոխման աշխատանքներին։ Առաջին կարգի ծովային Ռիչարդ Դերանը պատերազմի երկու տարիների ընթացքում Հնդկաստանում, Հունաստանում, Իտալիայում և այլուր իրականացրել է շուրջ 300 հազար մարդկանց փոխադրումը ռազմական թեժ շրջաններից դեպի համեմատաբար անվտանգ տարածքներ՝ արժանանալով Զորամիավորման պրեզիդենտական վկայագրի։ Խաղաղ օվկիանոսում նման գործողություններում աչքի է ընկել փոխգնդապետ Հենրի Գորգոդյանը՝ Ալենթաունից[46]։

---

41 J. H. Tashjian, նշվ. աշխ., էջ 224—250։

42 Նույն տեղում, էջ 434—470։ Зеркало, 18—24. III. 1992.

43 Our Boys, էջ 113, 135, 137։

44 Նույն տեղում, էջ 105—106, 125։

45 Նույն տեղում, էջ 105, 131։ J. H. Tashjian, նշվ. աշխ., էջ 481։ Ասպարեզ Հիսնամյակ 1908—1958, Ֆրեզնո, 1958, էջ 220։

46 Our Boys, էջ 104, 113։

Ամերիկահայերի ջանքերով պատերազմի ամենածանր տարիներին անդամ կազմակերպվել են բազմաթիվ թատերական ներկայացումներ և այլ միջոցառումներ, որոնց ընթացքում հանգանակված գումարը տրամադրվել է բարեսիրական նպատակների և Պատերազմի արժեթղթերի գնմանը։ Ռազմաճակատում վիրավորված ֆիլադելֆիաբնակ կրտսեր ենթասպա Ջոն Ֆերբեշեթյանն ապաքինվելով, հիվանդանոցի ամերիկյան վիրավոր զինվորների մասնակցությամբ կազմակերպել է ծովի վրա առաջին թատերական ներկայացումը։ Հաջողությունն այնքան մեծ էր, որ շուտով խումբը «Ծիրանագույն սիրտ» միջոցառման շրջանակներում հարյուր քառասունհինգ ներկայացումներով հանդես է եկել ԱՄՆ-ի քսանհինգ նահանգներում՝ հիվանդանոցների վիրավոր զինվորների համար, մասնակցել Պատերազմի արժեթղթերի վաճառքի երեք մեծ հանդիսությունների՝ հանգանակելով 2 մլն դոլար[47]։

Հայերի տաղանդով, քաջությամբ ու նվիրվածությամբ հիացել ու հպարտացել են ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյաներ, պետական ու ռազմական գործիչներ՝ արդարացիորեն ընդգծելով ամերիկահայոց առանձնահատուկ տեղն ու դերը հաղթանակը նվաճելու գործում։ Այդ է վկայում ամերիկյան Ազգային լեգեոնի հրամանատար Ջորջ Ն. Քրեյդը, որի զորագնդում ևս մարտնչել են հազարավոր ամերիկահայեր։ Նա գրել է. «Այդ ընդհարման ժամանակ Ամերիկայի կրակե գծում ներկա ազգերի այս քանակի մեջ, հավանաբար, ոչ ոք այնքան հայտնի չի եղել, որքան հայկական տոհմի ամերիկացիները։ Ամերիկահայ տղամարդիկ և կանայք ինքնամոռաց դիմադրեցին՝ հերոսաբար ծառայելով թե՛ տանը և թե՛ դրսում։ Հայաստանի ամերիկացի որդիները քաջաբար կռվեցին և զոհվեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի յուրաքանչյուր թատերաբեմում։ Այսօր նրանցից շատերը կրում են բարձրագույն ռազմական շքանշաններ՝ այդ ճակատամարտերում ցուցաբերած հերոսության և նվիրվածության համար»[48]։

Իսկ Պաշտպանության քարտուղարի օգնական Պոլ Հ. Գրիֆֆիթն այդ կապակցությամբ ասել է. «Երկու համաշխարհային պատերազմների վճռական փորձության պահին այս կապն (հայերի և ամերիկացիների—Ք. Ա.) ավելի ամուր հանդիսացավ, քան արենակցականը։ Սա բացատրվում է մեր մտածողության ընդհանրությամբ, կեցվածքի և գործողությունների միասնությամբ։ Ես համոզված եմ, որ ցանկացած ծագման ամերիկացի հպարտ է հոգևոր արենակցության օրինակ հանդիսացող ամերիկահայերի վերաբերմունքից, որ նրանք դրսևորեցին Երկրորդ համաշխարհային պատերազմում իրենց քաջարի դիմադրությամբ՝ ի հատուցումն այն պաշտպանության, որ գտել էին այս երկրում»[49]։

Անհատ քաղաքացիներից բացի, Երկրորդ աշխարհամարտում իրենց անգնահատելի նպաստն են բերել նաև ամերիկահայ հասարակական բազմաթիվ նազմակերպություններ, հայրենակցական միություններ և կուսակցություններ։

Պատերազմի տարիներին հայրենասիրական մղումով էին գործում ամերիկյան տասներեք քաղաքների հայկական կենտրոնները։ Օրինակ՝ Նյու Յորքի Ամերիկահայերի կոմիտեն ամբողջ պատերազմի ընթացքում հանգանակել և ռազմական տեխնիկա գնելու նպատակով կառավարությանն էր տրամադրել մի քանի միլիոն դոլար, որով գնվել էին «Հայաստանի ոգի», «Արարատ» և այլ հայաշունչ անուններ կրող ինքնաթիռներ ու նավեր։ Սան Ֆրանցիսկոյի հայերն իրենց հանգանակած միջոցներով Հայկական կոմիտեի անունից 1942 թ. օգոստոսին ամերիկյան Կարմիր խաչին են նվիրել «Մասիս» երկաթուղային կառաշարը, իսկ երկրի ռազմական կարիքների համար միայն 1943 թ.՝ 1 մլն դոլար։ «Ֆրեզնոյի ամերիկահայ քաղաքացիների լիգայի» և անհատ հայ

47 Նույն տեղում, էջ 103։
48 Նույն տեղում, էջ VI։
49 Նույն տեղում, էջ V։

նվիրատուների ջանքերով 1942—1944 թթ. հավաքվել է շուրջ 8,5 մլն դոլար և այլն[50]։

Ամերիկահայերի անմնացորդ նվիրվածության վերոհիշյալ և բազմաթիվ այլ օրինակներ արժանացել են երկրի բարձրաստիճան պաշտոնյաների ամենաջերմ գնահատանքին։ Այսպես՝ Նյու Յորքի նահանգապետ Ն. Ֆորդն ասել է. «Այս արդյունքը մեր հայկական ծագումով ամերիկացի քաղաքացիների հավատարմության ու նվիրվածության կոթողային վկայությունն է. դա նվաճում է, որով նրանք կարող են պարզապես հպարտանալ»[51]։

Բարձր գնահատանքի է արժանի Հայ Երիտասարդաց Միության գործունեությունը պատերազմի առաջին իսկ օրերից. այն իր անդամների շուրջ կեսին (1.000 երիտասարդ) ծառայության էր ուղարկել ամերիկյան բանակի տարբեր ստորաբաժանումներ, ռազմաճակատին տրամադրել հանգանակություններով գնված երկու ոմբակոծիչներ։

Ամերիկահայերը եռանդով արձագանքեցին նաև Պատերազմի արժեթղթերի վաճառքի կառավարության կոչին՝ երկրի այլ ազգային ներկայացուցիչների համեմատությամբ գնելով ավելի մեծ քանակությամբ արժեթղթեր։ Համաձայն պետական գանձարանի դեպարտամենտի հաղորդումների, 1943 թ. Իլինոյսի նահանգում հածանավերի կառուցման համար կազմակերպված հավաքույթի ժամանակ հայերը գնել են 360 հազար դոլարի, իսկ մեկ այլ առիթով՝ 300 հազար դոլարի արժողության Պատերազմի արժեթղթեր։ Հայ Երիտասարդաց Միությունն ու Հայ Հեղափոխական Դաշնակցությունը շուրջ 1 մլն դոլարի այդպիսի արժեթղթեր գնելու համար արժանացել են բարձր Ալյումինե սարդևի[52]։

Ֆաշիզմի դեմ պայքարի ճակատագրական տարիներին ամերիկահայ տարբեր կուսակցությունները միասնականություն են դրսևորել ոչ միայն իրենց քաղաքացիական պարտքի կատարման, այլև՝ հեռավոր հայրենիքին նյութապես և բարոյապես սատարելու գործում։ Այդ մասին է վկայում 1941 թ. օգոստոսին Նյու Յորքում տեղի ունեցած զանգվածային հանրահավաքի ժամանակ ԽՍՀՄ կառավարությանն ուղղված ամերիկահայության հետևյալ դիմումը. «Մենք՝ ամերիկահայերս, որոնց բնիկ երկիրը կը պատերազմի Կարմիր Բանակը, կզգանք, որ պարտավոր ենք օգնելու Սովետ Մեծության, պայքարելու մինչև այն ատեն, երբ ամբողջ աշխարհի երեսեն կոչնչացվի ֆաշիզմը»[53]։

Պատերազմի ամենամճռական տարիներին աշխարհով մեկ սփռված հայությունը միավորվել է Ազգային ճակատներում, որոնց գործուն կազմակերպություններից էր նաև 1944 թ. մարտի 19-ին Նյու Յորքում ձևավորված Ամերիկահայ ազգային խորհուրդը՝ ամերիկահայ տարբեր կազմակերպությունների միասնական ճակատը (բաղկացած ՌԱԿ-ի, ՍԴՀԿ-ի, Ամերիկահայ Առաջադիմական Միության, ՀԲՄ-ի, հարանվանական եկեղեցիների, տարբեր հայրենակցականների ու միությունների ներկայացուցիչներից), որը երկրով մեկ տարածված իր բազմաթիվ մասնաճյուղերով միջոցառումներ, հանգանակություններ ու նվիրատվություններ է կազմակերպել ի նպաստ ամերիկյան և խորհրդային բանակների, Կարմիր Խաչի և Մայր Հայրենիքի, իսկ պատերազմի ավարտից հետո (մինչև 1950 թ.) ձեռնամուխ է եղել նաև նորահաստատ ՄԱԿ-ի շրջանակներում Հայ Դատին արդարացի լուծում տալու խնդրին[54]։ Ամերիկահայ ազգային խորհրդի հայրենանվեր ջանքերի շնորհիվ 1944 թ.

---

50 Նույն տեղում, էջ 472—474, 481։

51 N. Barsumian. Նշվ. աշխ., էջ 145։

52 Նույն տեղում, էջ 186—187, J. H. Tashjian, Նշվ. աշխ., 1947, էջ 58—59, S. Atamian, The Armenian Community, New York, 1955, p. 394.

53 Ինչու համար կը կռվինք մենք հայերս, Նյու Յորք, 1942, էջ 74։

54 Հայ ժողովրդի պատմություն, հ. VIII, էջ 154։ Ա. Անդրեասյան, Նշվ. աշխ., էջ 11—12, 119—120։

գարնանը ֆաշիզմին հերոսաբար դիմագրաված ԽՍՀՄ-ի ազատագրված տարածքների բնակչության համար ուղարկվել է 75 հազար դոլարի արժողության 25 հազար նվեր-ծանրոց, Հայաստանի համար՝ մեկ նավ հագուստեղեն։ Բացի այդ, Ռուսաստանի օգնության կոմիտեի միջոցով Կարմիր բանակի համար առաքվել է 50 հազ. դոլար, ինչպես նաև 87 հազ. դոլարի արժողության դեղորայք։ Խորհրդային Միության պատերազմական ջանքերին աջակցող ամերիկա-հայկական կոմիտեն մինչև 1943 թ. Կարմիր բանակի համար հանգանակել է շուրջ 56 հազ., կարիքավորների համար՝ 29 հազ., Հայաստանի համար՝ 11 հազ. դոլար, ինչպես նաև 9 հազ. դոլարի արժողության 2.700 կտոր բրդյա գործվածքեղեն և այլն[55]։

Ամերիկահայությունը, անմնացորդ օժանդակելով պատերազմից ուժասպառ Խորհրդային Միությանը և հեռավոր Մայր Հայաստանին, իր զգալի ներդրումն է ունեցել նաև սփյուռքի առաջադեմ ուժերի կողմից «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման գործին։ Ամերիկահայության արագ և կազմակերպված ջանքերի շնորհիվ այդ նպատակով 1943 թ. մարտից մինչև 1944 թ. մարտ ընկած ժամանակահատվածում ԱՄՆ-ում հանգանակվել է առնվազն 115 հազ. դոլար՝ «Սասունցի Դավիթ» տանկային առաջին (նաև 173 հազ. դոլար՝ Կարմիր խաչի հիմնադրամին), ապա՝ 40 հազ. դոլար երկրորդ շարասյունների կառուցման համար, որոնք շատ կարճ ժամանակում շարք մտնելով, մասնակցել են խորհրդային բանակի ազատագրական հաղթարշավին։ Իսկ 1945 թ. «Զորավար Բագրամյան» տանկային նոր շարասյան կառուցման համար սկսված հանգանակությունը դադարել է Հայրենական մեծ պատերազմի ավարտի հետ[56]։ Ամերիկահայոց հոգևոր առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի ջանքերով կազմակերպված Հայկական հանձնախումբը մեկ տարվա ընթացքում, ի նպաստ Կարմիր բանակի, Մայր Հայրենիքի և սփյուռքի հայրենակիցների, հանգանակել է 120 հազ. դոլար, իսկ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար՝ 85 հազ. դոլար[57]։

Ամերիկահայերի անդուլ ջանքերի շնորհիվ հնարավոր էր դարձել օգնել նաև ֆաշիստական ճամբարներում բռնադատված բազմահազար հայորդիների. սկզբում՝ նյութապես ու բարոյապես, ապա նաև՝ տեղափոխելով ու վերաբնակեցնելով նրանց ԱՄՆ-ում, ինչպես նաև Կանադայում, Հարավային Ամերիկայում և Ավստրալիայում[58]։ Այդ դժվարին պարտականությունն իր վրա էր վերցրել Սան Ֆրանցիսկոյի «Օմար Խայյամ» ճաշարանի տնօրեն Ջորջ Մարտիկյանը, որը ԱՄՆ-ի զինված ուժերի նախարարության հանձնարարությամբ ղեկավարել է տարբեր մայրցամաքներում տեղակայված ամերիկյան զորքերի պարենավորումը կարգավորելու հարցերը։ Պետական բոլոր առաջադրանքները բարձր մակարդակով իրականացնելու համար նա արժանացել է համընդհանուր ճանաչման[59]։ Ջ. Մարտիկյանը եվրոպական տարբեր երկրներ և, մասնավորապես, Գերմանիա իր առաքելությունների ընթացքում այցելել է տեղի ճամբարները, հանդիպել հարյուրավոր հայազգի գերիների, որոնք, ստալինյան երկրում ծավալված՝ հետպատերազմյան հալածանքներից ու աքսորից սարսափահար, չէին համարձակվում վերադառնալ իրենց հայրենի բնակավայրերը։ Նրանց կյանքը փրկելու նպատակով ամերիկ-

---

55 Հայ ժողովրդի պատմություն, հ. VIII, էջ 154։ Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 2, Երևան, 1967, էջ 402։ Ամերիկյան Սովետ բարեկամություն, Նյու Յորք, 1943, էջ 48։

56 Հայ ժողովրդի պատմություն, հ. VIII, էջ 158։ Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 403։

57 Ա. Քհնյ. Աջճյան, Վիճակագրություն և պատմություն առաջնորդական թեմին Հայոց Ամերիկայի 1948, Նյու Յորք, 1949, էջ 45։

58 V. Wertsman, նշվ. աշխ., էջ 16։

59 A. S. Avakian, The Armenians in America, Minneapolis, 1977, էջ 53։ Դաղար-Ջարրգ, Հուշամատյան Բարձր Հայքի. Կարինապատում, Բեյրութ, 1957, էջ 772—773։

յան քաղաքական ու զինվորական շրջանակներում մեծ հեղինակություն վայելող Ջ. Մարտիկյանը, ստանալով Վաշինգտոնի պաշտոնական հանձնարարությունը, 1947 թ. Սան Ֆրանցիսկոյում կազմակերպել է «Հայրենազուրկ Հայերի Օգնության Ամերիկյան Ազգային Կոմիտե» (ԱՆՋԱ)՝ ստանձնելով նախագահի պարտականությունը, իսկ փոխնախագահն էր փաստաբան Սուրեն Սարոյանը։ Կամավոր հիմունքներով գործող այդ կազմակերպությունը ԱՄՆ-ի տարբեր նահանգներում տարածված իր մասնաճյուղերի, Հայ Օգնության Միության և ազգային այլ կազմակերպությունների տրամադրած նյութական միջոցներով ամերիկյան բեռնատար «Նեվի» ռազմանավերով և «Դուգլաս» օդանավերով, ընդհուպ մինչև 1952 թ., իրականացրել է պատերազմի տարիներին Գերմանիայում, Ավստրիայում, Իտալիայում հայտնված ավելի քան 4.500 հայրենազուրկ ու տարագիր հայերի փոխադրումն ու բնակեցումը ամերիկյան հողում (հիմնականում՝ Նյու Յորք, Նյու Ջերսի, Փենսիլվանիա, Մասսաչուսեթս, Ռոդ Այլենդ, Ջոնեկտիկուտ, Միչիգան, Իլինոյս, Օհայո, Ուիսկոնսին, Կալիֆոռնիա և այլ նահանգներում)[60]։ Արևմտյան Եվրոպայում ԱՆՋԱ-ի ծրագրերն իրագործվել են շնորհիվ ամերիկյան բանակի զորավար Հայկ Շեքերջյանի, որը, հավատարիմ մնալով իր արմատներին, պատերազմի ավարտից անմիջապես հետո մեկ առ մեկ այցելել է ռազմագերիների ճամբարները, փնտրել, գտել և օգնել անորոշության մեջ խարխափող իր հայրենակիցներին (ամենից շատ հայ տարագիրներ կային Շտուտգարդի մոտ գտնվող Ֆունկերկազերնի ճամբարում՝ շուրջ 2.000 մարդ)[61]։ Ջորջ Մարտիկյանի ցուցաբերած քաղաքական, պետական ու դիվանագիտական հմտությունները բարձր են գնահատվել ԱՄՆ-ի նախագահի, Կոնգրեսի և զինվորական հրամանատարության կողմից. նա արժանացել է Ամերիկյան բանակի զինվորների մետաքսյա ժապավենի, Ազատության շքանշանի, ինչպես նաև՝ նախագահ Դ. Էյզենհաուերի շնորհած «Ամերիկյան Առաջին Քաղաքացի» տիտղոսին[62]։

Այսպիսով, Երկրորդ աշխարհամարտի տարիներին երկրագնդի առաջադեմ ժողովուրդների հետ միասին ֆաշիզմի ջախջախման և հաղթանակի նվաճման գործում իր գնահատելի և արժանավոր ավանդն է ներդրել նաև սփյուռքի ամերիկահայ հատվածը։

УЧАСТИЕ АМЕРИКАНСКИХ АРМЯН ВО ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЕ

К. Р. АВАКЯН

Резюме

Рассеянные исторической судьбой по всему миру армяне, особенно американские армяне, в годы второй мировой войны вместе с прогрессивными народами боролись против фашизма.

Весь период войны во всех видах вооруженных сил (пехота, военно-воздушные и военно-морские силы) и во всех военных действиях (тихоокеанские, североафриканские, европейские и др.) бок о бок с американскими солдатами героически сражались около 20 тыс. американских армян.

---

60 Ջ. Մարտիկյան, Երգն Ամերիկայի, Բեյրութ, 1957, էջ 329—333, 351, 352։ N. Barsumian, նշվ. աշխ., էջ 151։

61 Ջ. Մարտիկյան, նշվ. աշխ., էջ 329, 351։ N. Barsumian. նշվ. աշխ., էջ 251։

62 Ղազար-Ջարբդ, նշվ. աշխ., էջ 776։

Американские армяне самоотверженно служили в частях военной медицины, участвовали в спасательных работах американского Красного креста на различных материках.

Свои силы и интеллектуальный потенциал они вложили также во «внутренний фронт» (интендантство, судостроительное и другое военное производство, вплоть до создания атомной бомбы).

Кроме отдельных граждан, в период второй мировой войны свой неоценимый вклад в дело победы внесли также американо-армянские общественные организации, земляческие союзы, национальные партии, оказывая тем самым материальную и моральную поддержку США, а также своей далекой Родине.